



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

-----N-----

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մեպտեմբերի 1-ը Հայաստանում նշվում է որպես Գիտելիքի, գրի և դպրության օր:

Ճիշտ է, համավարակով պայմանավորված՝ այս տարի նոր ուսումնական տարվա մեկնարկը կտրվի մի փոքր ուշ, բայց դա չի կարող խանգարել մեզ՝ շնորհավորելու մեր աշակերտներին, ուսանողներին, մանկավարժներին, ծնողներին և, առհասարակ, կրթության ոլորտի բոլոր ներկայացուցիչներին՝ գիտելիքի օրվա կապակցությամբ:

Հանրապետության և մասնավորապես, Կոտայքի մարզի սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ,

Նախ և առաջ մաղթում եմ, որ նոր ուսումնական տարին նորանոր հաջողությունների սկիզբ դառնա, իսկ կրթությունը՝ այդ հաջողությունների և բարձունքների նվաճման գլխավոր գրավականը:

Հարգելի՛ մանկավարժներ, կրթության ոլորտի ներկայացուցիչներ,

Գաղտնիք չէ, որ համավարակի պայմաններում այս տարի կրկնակի դժվարանալու է նաև ձեր աշխատանքը, սակայն պիտի խնդրեմ, որ նույնիսկ այդ դժվարությունների մեջ ձեզ համար առաջնային լինի աշակերտի և ուսանողի լավագույն շահը, և ձեր աշխատանքը կազմակերպելիս առաջնորդվեք իրական մանկավարժին վայել անմնացորդ նվիրումով և վեհ առաքելությամբ:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել նաև առաջին դասարանցիներին և ցանկանալ, որ նոր բացահայտումների և հետաքրքրությունների կարևորագույն այս օրրանից քաղեք միմիայն լավագույնը ձեր կյանքի հետագա ընթացքն ապահովելու համար:

Շնորհավոր Գիտելիքի օր:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ